



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՏԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ
ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻԵՐԻ



ԿԱՆԻՆԱՏԵՍՈՒՄ 2026

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ
ՍՊԱՍՎՈՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ
ՀԻԴՐՈԳԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Գարնանային վարարումները ՀՀ գետերի ջրային ռեժիմի հիմնական փուլերից է, որը ձևավորվում է ձնհալքային, անձրևային և ստորերկրյա ջրերից և ունի խառը սնում: Գարնանային վարարումների հոսքի ծավալը, առավելագույն ելքի մեծությունը, սկիզբը և ավարտը, ձևավորման ընթացքը պայմանավորված են մթնոլորտային տեղումների քանակով և բնույթով, ջերմային ռեժիմով, ձյան մեջ եղած ջրի պաշարով, ձյան կուտակման և հալքի ընթացքով, ռելիեֆի առանձնահատկություններով և այլն: Գարնանային վարարումների ընթացքում հանրապետության գետերով անցնում է տարեկան հոսքի ընդհանուր ծավալի 30-90%-ը, որի մեծությունը պայմանավորված է առանձին գետերի ջրհավաք ավազանների տեղական գործոնների ազդեցությամբ:

Գարնանային վարարումները գետերի մեծ մասում սկսվում են հիմնականում մարտի երրորդ - ապրիլի առաջին տասնօրյակներում: ՀՀ գետերում տարեկան առավելագույն ելքերը դիտվում են գարնանային վարարումների ընթացքում և հաճախ գետերի ավիամերձ տարածքների, բնակավայրերի, գյուղատնտեսական հողահանդակների, ենթակառուցվածքների հեղեղման պատճառ դառնում:

Գետերում գարնանային վարարումների բնութագրերը պայմանավորվում են *նախաձմեռային* (սեպտեմբեր-նոյեմբեր), *ձմեռային* (դեկտեմբեր-մարտ) *ամիսների* փաստացի և *վարարումների ժամանակաշրջանի* (ապրիլ-հունիս) կանխատեսվող հիդրոոդերևութաբանական պայմանների առանձնահատկություններով:

Հաջորդիվ ներկայացվում է 2026 թվականի գարնանային վարարումների հոսքը պայմանավորող հիդրոոդերևութաբանական պայմանների նկարագիրը:

Նախաձմեռային ժամանակաշրջանի հիդրոոդերևութաբանական պայմանները.

- *սեպտեմբերին* ամսական տեղումների քանակը Արմավիրի, Արարատի մարզերում և Երևանում կազմել է նորմայի 20-80%-ը, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում կազմել է ամսական նորմայի 120-170%-ը, իսկ Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերում կազմել է նորմայի 80-120%-ը (նկ.1.ա)
- *հոկտեմբեր ամսին* օրերի գերակշռող մասը հանրապետության շրջանների մեծ մասում ուղեկցվեց առանց տեղումների եղանակներով: Ամսական տեղումների քանակը հանրապետությունում հիմնականում ցածր է եղել նորմայից. Տավուշի,

Վայոց ձորի և Սյունիքի մարզերում տեղումները եղել են նորմայի 20-70%-ի սահմաններում, Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի մարզերում և Երևանում եղել են նորմայի 70-90%-ի սահմաններում, իսկ Շիրակի, Լոռու, Արագածոտնի և Արմավիրի մարզերում ամսական տեղումների քանակը կազմել է նորմայի 90-110%-ը (նկ.1.բ)

- *նոյեմբերին* հանրապետությանում ամսական տեղումների քանակը խիստ ցածր է եղել ամսական նորմայից՝ կազմելով հիմնականում նորմայի մինչև 10%-ը, միայն Արարատի և Վայոց ձորի մարզերում եղել է նորմայի 10-20%-ի սահմաններում: Նոյեմբերին հանրապետության տարածքում տեղումներ դիտվել են միայն նոյեմբերի 15-17-ն ընկած ժամանակահատվածում և այն երկրորդ տաք և չոր նոյեմբերն էր սկսած 1935 թվականից (նկ.1.գ):


Նախաձմեռային ժամանակահատվածի ջերմաստիճանների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.

- *սեպտեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանները հանրապետությունում եղել են կամ նորմայից ցածր կամ նորմայի սահմաններում՝ բացասական շեղումներով: Սեպտեմբերի առաջին տասնօրյակում ջերմաստիճանները նորմայից բարձր են եղել 2-3 աստիճանով, իսկ երկրորդ և երրորդ տասնօրյակներում նորմայից ցածր է եղել 1-3 աստիճանով: Այսպիսով, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում ամսական ջերմաստիճանը նորմայից ցածր է եղել 1.0-1.5 աստիճանով, իսկ մնացած շրջաններում նորմայի սահմաններում՝ բացասական շեղումով (նկ.2.ա),
- *հոկտեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանները Տավուշի և Արմավիրի մարզերում եղել է նորմայի սահմաններում, իսկ հանրապետության մյուս շրջաններում հիմնականում եղել են նորմայից բարձր մինչև 1.5 աստիճանով (նկ.2.բ),
- *նոյեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանները բարձր են եղել նորմաներից, Արմավիրի և Արարատի մարզերում նորմայից բարձր մինչև 1.5 աստիճանով, Շիրակի, Կոտայքի մարզերում և Երևանում՝ 1.5...2.5 աստիճանով, իսկ մյուս շրջաններում՝ 2.5...3.5 աստիճանով (նկ.2.գ):

Նկ.2. ք)



Նկ.2. գ)



Այսպիսով, նախաձմեռային ժամանակաշրջանի հիդրոոդերևութաբանական պայմանների վերլուծությունից հետևում է, որ դրանք 2026 թվականի գարնանային վարարումների հոսքի ձևավորման վրա կունենան նորմայից բացասական շեղումով ազդեցություն:


Ձմեռային ժամանակաշրջանի հիդրոդերևութաբանական պայմանները.

Ձմեռային ժամանակաշրջանում տեղումների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.


- *դեկտեմբերին* ամսական տեղումների քանակը եղել է նորմայի սահմաններում կամ նորմայից բարձր, Շիրակի և Արարատի մարզերում կազմել է նորմայի 90-100%-ը, իսկ մնացած մարզերում և Երևանում կազմել է 100-150%-ը (նկ.3.ա)
- *հունվարին* հանրապետության մեծ մասում տեղումների քանակը բարձր է եղել նորմայից՝ Շիրակի, Արագածոտնի, Տավուշի, Վայոց ձորի մարզերում և Երևանում կազմել է նորմայի 130-170%-ը, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում կազմել է նորմայի 100-130%-ը, իսկ Արմավիրի և Արարատի մարզերում՝ նորմայի 70-100%-ը (նկ.3.բ)
- *փետրվարին* հանրապետության ամբողջ տարածաքում տեղումները գերազանցել են ամսական նորման և սա երրորդ տեղումնառատ փետրվարն էր սկսած 1935 թվականից: Տավուշի, Լոռու, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում ամսական տեղումների քանակը կազմել է նորմայի 140-200%-ը, Շիրակի, Սյունիքի մարզերում և Երևանում կազմել է նորմայի 200-250%-ը, իսկ Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Վայոց ձորի մարզերում՝ 250-300%-ը (նկ.3.գ)
- *մարտին (մարտի 24-ի դրությամբ)* տեղումների քանակը Արագածոտնի մարզում կազմել է նորմայի 150-200%-ը, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի մարզերում և Երևանում՝ 100-150%-ը, իսկ մնացած շրջաններում՝ նորմայի 60-100%-ը (նկ.3.դ):

**Նկ.3. Ամսական տեղումների քանակը նորմաների համեմատությամբ (%) ըստ մարզերի
ա) 2025թ. դեկտեմբեր, բ) 2026թ.հունվար գ) 2026թ.փետրվար
դ) 2026թ. մարտ (24-ի դրությամբ) ամիսներին**


Նկ.3. ա)




Նկ.3. ք)



Նկ.3. գ)



Նկ.3. դ)




Ձմռանը ամսական ջերմաստիճանների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.


- *դեկտեմբերին* հանրապետությունում օդի միջին ամսական ջերմաստիճանն ամենուր բարձր է եղել նորմայից: Լոռու, Տավուշի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում նորմայից բարձր է եղել մինչև 1.5 աստիճանով, իսկ մնացած մարզերում՝ 1.5-3.0 աստիճանով, (նկ.4.ա)
- *հունվարին* օդի միջին ամսական ջերմաստիճանը եղել է հիմնականում նորմայի սահմաններում, որոշակի դրական և բացասական շեղումներով: Այսպես, Արարատի մարզում և Երևանում ամսական միջին ջերմաստիճանը նորմայից ցածր է եղել մինչև 1 աստիճանով, Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Վայոց ձորի մարզերում եղել է նորմայի սահմաններում, իսկ մնացած շրջաններում բարձր է եղել նորմայից մինչև 1.5 աստիճանով (նկ.4.բ)
- *փետրվարին* ամենուր ամսական ջերմաստիճանները բարձր են եղել նորմաներից, Տավուշի, Լոռու, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի մարզերում և Երևանում ամսական ջերմաստիճանները նորմայից բարձր են եղել 3.5-5.0 աստիճանով, իսկ մյուս մարզերում՝ 5.0-6.5 աստիճանով (նկ.4.գ)
- *մարտին (մարտի 24-ի դրությամբ)* օդի միջին ամսական ջերմաստիճանը ամենուր ցածր է եղել նորմաներից՝ Շիրակի և Արմավիրի մարզերում նորմայից ցածր մինչև 1 աստիճանով, իսկ մնացած շրջաններում նորմայից ցածր 1.0-2.0 աստիճանով (նկ.4.դ):

**Նկ. 4. Օդի միջին ամսական ջերմաստիճանի շեղումը նորմայից (°C)
 ա) 2025թ. դեկտեմբեր, բ) 2026թ. հունվար, գ) 2026թ. փետրվար և
 դ) 2026թ. մարտի (24-ի դրությամբ) ամիսներին**


Նկ.4. ա)




Նկ.4. բ)



Նկ.4. գ)



Նկ.4. դ)



Ձմեռային ժամանակաշրջանում դիտված հիդրոտեղեկությանական պայմանները 2026 թվականի գարնանային վարարումների հոսքի ձևավորման վրա կունենան նորմայից դրական շեղումով ազդեցություն:

Ձնածածկույթ


ՀՀ գետերի գարնանային վարարումների հոսքի ծավալի և առավելագույն ելքերի մեծությունները կախված են վարարումներին նախորդած ժամանակահատվածում կուտակված ձյան քանակից, ձնակուտակման պրոցեսի ընթացքից, ինչպես նաև վարարումների ժամանակահատվածում ջերմային և խոնավության պայմաններից:

Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը հանրապետության տարածքում ըստ բարձրության, 2025 թվականի դեկտեմբերի 25-ի, 2026 թվականի հունվարի և փետրվարի 25-ի, մարտի 24-ի դրությամբ տրված է Նկար 5 ա - դ - ում:

2025 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում ձյան ծածկ առկա է եղել միայն բարձրալեռնային շրջաններում: Արագած Բ/Լ կայանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 11 սմ, իսկ առանձին կայաններում ձյան շերտի բարձրությունը կազմել է 1-3սմ (նկ.5.ա): Դեկտեմբերի 28-ին դիտվել են ձյան տեսքով տեղումներ, որի արդյունքում հանրապետության տարածքի մեծ մասում ձևավորվեց ձյան ծածկ, որի բարձրությունը Ապարան, Հրազդան, Ամբերդ օդերևութաբանական կայաններում կազմել է 40-55սմ, իսկ Արագած Բ/Լ կայանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 101 սմ:


Դեկտեմբերի երրորդ տասնօրյակի ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունը Արագած Բ/Լ կայանում կազմել է նորմայի 43%-ը, Սևանում, Հրազդանում և Ապարանում՝ 70-90%-ը, իսկ ցածրադիր՝ մինչև 1500 մետր բարձրության հատվածներում բարձր է եղել նորմայից:

Նկ.5.ա) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2025թ. դեկտեմբերի 25



2026 թվականի հունվարի 25-ի դրությամբ հանրապետության ամբողջ տարածքում, բացառությամբ առանձին ցածրադիր հատվածների (Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի հովտային շրջաններում), առկա է եղել ձյան ծածկ: Ձյան շերտի բարձրությունը Դիլիջանում, Տաշիրում, Ստեփանավանում եղել է 4-17 սմ սահմաններում, Գյումրիում ու Արթիկում՝ 22-25 սմ սահմաններում, Ամասիայում, Աշոցքում՝ 42-44 սմ, Սևանա լճի ավազանում 11-28 սմ սահմաններում, Շորժայում՝ 2սմ, Ապարանում, Հրազդանում կազմել է 57-61 սմ, Անանուն լ-ցքում՝ 59 սմ, Ջերմուկում՝ 65 սմ, Ամբերդում՝ 95սմ, իսկ Արագած բ/լ կայանում՝ 117 սմ (նկ.5.բ), մինչդեռ նախորդ տարի նույն օրը Արագած բ/լ կայանում կազմել էր ընդամենը 52սմ: Հունվարի երրորդ տասնօրյակում ձյան շերտի բարձրության միջին տասնօրյակային արժեքները հիմնականում նորմաներից դրական շեղում են ունեցել՝ 100-130%, իսկ որոշ կայաններում բավական բարձր են եղել նորմաներից՝ Ապարանում կազմել է նորմայի 172%-ը, Գավառում՝ 204%-ը, Անանուն լ-ցքում՝ 160%, Դիլիջանում՝ 156%, Ամբերդում՝ 163%:


Նկ.5.բ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2026թ. հունվարի 25



2025 թվականի փետրվարի 25-ի դրությամբ ձյան շերտի առավելագույն բարձրությունը Արագած բ/լ կայանում կազմել է 160 սմ, Ջերմուկ, Որոտան, Ամբերդ


օդերևութաբանական կայաններում ձյան շերտի բարձրությունը եղել է 70-86 սմ սահմաններում, Ապարանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 29սմ, Հրազդանում՝ 46սմ, Սևանում՝ 2սմ, Մասրիկում՝ 18սմ, Աշոցքում և Ամասիայում եղել է 30-45սմ սահմաններում: Սյունիքի, Տավուշի, Լոռու հովտային շրջաններում, Արարատյան դաշտում, Արենիում, Երևանում ձյան շերտը բացակայել է: Ամսվա վերջին օրերին դիտված տեղումների շնորհիվ ձյան շերտի բարձրությունն ավելացել է որոշ չափով, և փետրվարի 28-ի դրությամբ արդեն Արագած բ/լ կայանում կազմել է 227 սմ (նախորդ տարի նույն օրը կազմել է 80սմ) (նկ.5.գ): Փետրվարի երրորդ տասնօրյակի ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունները Գյումրիում և Արթիկում եղել են նորմայի 27-28%-ի սահմաններում, Ամասիայում՝ 100%, Աշոցք, Մասրիկ, Հրազդան, Ապարան կայաններում նորմայի 70-83%, Զերմուկում, Ամբերդում, Անանուն ւ-ցք-ում և Արագած բ/լ օդերևութաբանական կայաններում կազմել են նորմաների 107-125%-ը:

Նկ.5.գ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2026թ. փետրվարի 25



2026 թվականի մարտի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում ձնածածկ առկա է եղել հիմնականում 1700 մ-ից բարձր շրջաններում, այն էլ ոչ ամենուր (նկ.5.դ): Մարտի 25-ի դրությամբ Ամասիա օդերևութաբանական կայանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 44սմ, Աշոցքում՝ 30սմ, Սևան լճային, Մարտունի, Գավառ, Մասրիկ, Շորժա կայաններում ձյան ծածկը բացակայել է, Սեմյոնովկա կայանում կազմել է 62սմ, Հրազդանում՝ 49սմ, Ապարանում՝ 11 սմ, Անանուն լ-ցքում՝ 43սմ, Ամբերդում՝ 82սմ, Ջերմուկում՝ 75 սմ, Որոտանի լ-ցքում 83սմ, իսկ Արագած Բ/Լ կայանում 297 սմ (նախորդ տարի նույն օրը կազմել է 131 սմ): Արագած Բ/Լ կայանում մարտի 3-րդ տասնօրյակի (մինչև մարտի 25) ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունը կազմում է նորմայի 157%-ը:

Նկ.5.դ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2026թ. մարտի 25



Այսպիսով, գերավազաններում կուտակված ձյան պաշարները, կախված վարարումների ժամանակահատվածի օդերևութաբանական պայմաններից, վարարումների ժամանակաշրջանում կձևավորեն նորմայից դրական շեղումով հոսքի ծավալներ:

Վարարումների ժամանակաշրջանի եղանակի խորհրդարկական կանխատեսում

Ապրիլ, մայիս և հունիս ամիսներին հանրապետության տարածքում տեղումների քանակը կանխատեսվում է նորմային մոտ: Ապրիլ ամիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը կանխատեսվում է նորմայից ցածր 1 աստիճանով, իսկ մայիս և հունիս ամիսներին նորմայից բարձր մինչև 1 աստիճանով:

Արդյունքում, վարարումների ժամանակաշրջանի կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմանները վարարումների հոսքի ձևավորման մեջ կունենան նորմային մոտ ազդեցություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հաշվի առնելով դիտված և կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմանները, կանխատեսվում է, որ գետերում 2026 թվականի գարնանային վարարումների հոսքի ծավալները կլինեն նորմաների 100-130%-ի սահմաններում, իսկ առանձին գետերում՝ 140-160%-ի սահմաններում, վեգետացիոն շրջանի հոսքի ծավալները կլինեն նորմայի 100-120%-ի սահմաններում, իսկ առավելագույն ելքերի մեծությունները սպասվում են նորմաների 100-120%-ի սահմաններում (տես հավելվածը):


2. Գետերում ջրի առավելագույն ելքերի անցումները հիմնականում սպասվում են ապրիլի երրորդ, մայիսի առաջին և երկրորդ տասնօրյակներում:

3. Ջերմաստիճանի կտրուկ բարձրացման և հորդառատ անձրևների դեպքում գետերի մերձափնյա բնակավայրերի ու ցանքատարածությունների համար հնարավոր են ջրածածկումներ և ողողումներ, որոնց վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր է կազմել միայն 3-4 օր առաջ, երբ հստակ կանխատեսվում են մոտեցող տաք օդային ալիքներ և ինտենսիվ անձրևներ:

4. Սևանա լիճ

Հիմք ընդունելով եղանակի և Սևանա լիճ մուտք գործող գետային հոսքի կանխատեսումները, լճի մակերևույթից գոլորշացման մեծությունները, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխվելիք ջրի քանակը (միջինը 170 մլն.խոր.մ) և ոռոգման նպատակով լճից օրենքով սահմանված ջրառը՝ մինչև 170 մլն.խոր.մ (հաշվարկներում, որպես ջրառի սկիզբ ընդունվել է հունիսի երկրորդ տասնօրյակը), 2026 թվականի հուլիսի 1-ին 2026 թվականի ապրիլի 1-ի մակարդակի համեմատ կանխատեսվում է Սևանա լճի մակարդակի բարձրացում 40-45սմ-ով (1900.68-1900.73 մ սահմաններում), իսկ 2026 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ լճի մակարդակը

կանխատեսվում է 1900.30-1900.35 մ սահմաններում, որը 2026 թվականի հունվարի 1-ի մակարդակի համեմատ բարձր կլինի 8...13 սմ սահմաններում (նկ.6):



Նկ.6 Վարարումների ժամանակաշրջանում և տարվա ընթացքում Սևանա լճի մակարդակի փոփոխությունը 2012-2025թթ. ընթացքում, և կանխատեսումը 2026 թվականի համար

5. Ջրամբարներ

«Հայհիդրոնետ» ՊՈԱԿ-ի կողմից դիտարկվող 5 խոշոր ջրամբարների 2026 թվականի առավելագույն ջրալցվածությունը կանխատեսվում է.

- ✓ Ախուրյանի ջրամբարում՝ 100% (525 մլն.մ³),
- ✓ Արփիլիճ ջրամբարում՝ 80-85% (84.0-89.0 մլն.մ³),
- ✓ Ապարանի ջրամբարում՝ 82-88% (75.0-80.0 մլն.մ³),
- ✓ Ազատի ջրամբարում՝ 100% (70.0 մլն.մ³),
- ✓ Մարմարիկի ջրամբարում՝ 100% (24.0 մլն.մ³):

Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ կանխատեսումները կազմելիս հնարավորինս հաշվի են առնվել գարնանային վարարումների հոսքը ձևավորող գործոնները, և բացի այդ օգտագործվել են կանխատեսված մեծություններ, որոնք ըստ անհրաժեշտության պարբերաբար ենթակա են ճշգրտման, հետևաբար նման դեպքերում կճշգրտվեն նաև թողարկված կանխատեսումները և կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

«Հիդրոտեքնոլոգաբանության և մոնիթորինգի

կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

30.03.2026 թ.

ԼԵՎՈՆ ԱԶԻԶՅԱՆ

2026 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻՆԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

№	ԳԵՏ, ԼԻՃ, ԶՐԱՄԲԱՐ	ԴԻՏԱԿԵՏ	ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԽԱԼԸ	ԲԱԶՄԱՄՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ		
					ՆՎԱԶ.	ՄԻՋԻՆ	ԱՌԱՎ.
1	2	3	4	5	6	7	8
Գարնանային վարարումների հոսքի ծավալները. (01.04-30.06) մլն խոր.մ							
1	Փամբակ	Շիրակամուր	51.0	11.4	7.52	44.5	87.4
2	Փամբակ	Վանաձոր	105	23.5	44.9	102	209
3	Փամբակ	Մեղրուր	146	28.8	52.8	146	275
4	Փամբակ	Թումանյան	217	35.8	64.9	190	313
5	Դեբեդ	Թումանյան	458	98.6	169	449	731
6	Դեբեդ	Ախթալա	540	111	204	532	854
7	Դեբեդ	Այրում	576	118	178	573	947
8	Լեռնաջուր	Լեռնապար	27.0	6.17	11.4	27.0	55.4
9	Տանձուր	Վանաձոր	44.0	9.60	11.0	42.3	77.6
10	Ալարթես	Դեբեդ	35.0	5.85	10.6	30.6	58.6
11	Ձորագետ	Կաթնառապ	48.0	7.65	27.3	47.4	72.7
12	Ձորագետ	Սյրեփանավան	195	35.0	71.8	195	324
13	Ձորագետ	Գարգառ	257	44.6	87.3	245	438
14	Տաշիր	Սարապովկա	52.0	13.1	14.7	46.9	91.0
15	Գարգառ	Կուրթան	25.0	5.29	4.61	23.1	42.4
16	Մարցիգետ	Թումանյան	47.0	10.5	10.3	46.6	98.9
17	Աղսյուն	Ֆիոլետովո	22.0	4.26	6.98	21.1	50.5
18	Աղսյուն	Դիլիջան	62.0	13.6	16.2	56.4	148
19	Աղսյուն	Իջևան	211	44.6	44.2	183	405
20	Բլղանգետ	Դիլիջան	16.0	3.53	3.74	15.1	26.0
21	Շամլուղ	Դիլիջան	10.0	2.64	3.09	9.22	22.6
22	Գեպրիկ	Գոշ	75.0	17.1	14.4	70.1	157
23	Գեպրիկ	Ճամբարակ	18.0	4.03	3.47	15.7	30.6
24	Պաղջուր	Գեպրահովիտ	40.0	9.90	3.42	33.3	60.9
25	Ոսկեպար	Ոսկեպար	24.0	8.46	2.70	22.6	55.4
26	Կիրանց	Աճարկուր	20.0	5.24	1.40	18.5	36.7
27	Հախում	Ծաղկավան	30.0	6.27	4.89	26.7	45.2
28	Տավուշ	Բերդ	16.0	5.08	1.55	13.3	34.2
29	Հախինջա	Այգեձոր	62.0	15.1	9.40	55.0	104
30	Նայրիգետ	Գանձաքար	13.0	3.46	2.27	12.0	23.5
31	Ախուրյան	Ամասիա	90.0	25.5	35.3	89.6	193
32	Ախուրյան	Ախուրիկ	91.0	23.4	40.1	91.0	181
33	Ձորագետ	Ձորակերտ	6.00	1.41	1.75	5.68	16.3
34	Աշոցք	Կրասար	43.0	6.36	23.6	42.9	70.1
35	Կարկաչան	Ղարիբջանյան	14.0	3.56	3.38	12.1	23.6
36	Քասախ	Վարդենիս	29.0	11.2	5.68	25.8	66.8
37	Քասախ	Աշտարակ	60.0	12.4	11.5	37.4	106
38	Թթուջուր	Թթուջուր	19.0	5.74	3.10	17.9	32.1
39	Եղիպատրուշ	Եղիպատրուշ	6.20	1.17	1.45	4.04	9.50
40*	Գեղարոտ	Արագած	23.0	4.18	6.70	22.3	36.2
41	Շաղվարդ	Փարբի	6.00	1.50	2.55	5.60	14.2
42	Ամբերդ	Ագարակ	10.0	4.00	0.30	8.78	29.6
43	Հրազդան	Հրազդան	170	37.1	57.0	166	320
44	Հրազդան	Արգել	59.0	16.0	27.1	54.6	108
45	Հրազդան	Երևան	117	42.0	27.0	116	234
46	Մարմարիկ	Հանքավան	45.0	8.80	9.53	39.1	68.6
47	Մարմարիկ	Աղավնաձոր	115	27.3	34.0	114	284
48	Ծաղկամարգ	Արտավազ	21.0	4.68	7.44	21.0	36.2
49	Գոմուր	Մեղրաձոր	40.0	11.6	10.9	39.6	97.6
50	Դալար	Արգաքան	21.0	6.00	5.42	19.3	44.5
51	Արաիգետ	Արագյուղ	11.0	4.45	1.00	7.60	32.5
52	Ազատ	Գառնի	80.0	16.0	36.3	77.2	155

1	2	3	4	5	6	7	8
53	Վեղի	Ուրցածոր	47.0	10.8	6.48	37.6	83.9
54	Արփա	Ջերմուկ	121	16.4	46.2	97.4	166
55	Արփա	Եղեգնածոր	250	51.7	27.0	145	352
56	Արփա	Արենի	400	90.2	51.0	250	612
57	Վայք	Ջառիթափ	14.0	2.87	1.96	10.0	21.3
58	Գյածոր	Վերնաշեն	4.50	1.18	0.35	3.32	8.97
59	Եղեգիս	Հերմոն	121	20.6	19.0	78.9	178
60	Եղեգիս	Շալիհն	180	36.2	34.4	118	255
61	Արտաբուն	Արտաբույնք	21.0	4.11	3.93	15.3	29.9
62	Սելիմազետ	Շալիհն	50.0	10.9	5.84	33.4	86.2
63**	Մեղրիզետ	Լիճք	23.0	2.58	8.10	15.5	25.5
64	Մեղրիզետ	Մեղրի	75.0	19.1	18.3	56.5	115
65	Ողջի	Քաջարան	69.0	10.1	27.9	62.3	102
66	Ողջի	Կապան	215	44.4	41.0	196	384
67	Որոտան	Գորայք	83.0	15.3	28.9	63.7	113
68	Ծղուկ	Ծղուկ	47.0	11.4	8.30	30.7	85.1
69	Գորիսզետ	Գորիս	7.00	2.00	1.99	4.69	12.4
70	Գեղի	Գեղի	90.0	15.1	35.9	80.9	134

* տրված է ապրիլ-օգոստոս ամիսների հոսքի կանխատեսումը և բնութագրերը

** տրված է ապրիլ-հուլիս ամիսների հոսքի կանխատեսումը և բնութագրերը

Սևանա լիճ թափվող գետեր							
71	Ձկնազետ	Ծովագյուղ	31.0	6.67	8.10	26.2	54.3
72	Դրախտիկ	Դրախտիկ	4.50	1.35	0.32	4.05	8.72
73	Փամբակ	Փամբակ	4.50	1.20	1.29	3.84	10.1
74	Մասրիկ	Ծովակ	40.0	6.31	17.8	37.2	70.9
75	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	11.0	2.88	2.81	11.0	23.2
76	Արծվանիստ	Արծվանիստ	6.00	2.63	1.20	5.70	18.0
77	Վարդենիս	Վարդենիկ	33.5	7.03	17.9	33.6	55.4
78	Մարտունի	Գեղիովիտ	32.5	7.31	16.3	32.4	64.5
79	Արգիճի	Վերին Գետաշեն	155	27.3	54.3	122	291
80	Ծաղկաշեն	Վաղաշեն	35.0	5.66	15.7	31.6	48.4
81	Բախտակ	Ծակքար	18.0	4.81	1.16	16.2	32.9
82	Շողվակ	Ձորագյուղ	10.0	2.70	3.35	9.23	19.9
83	Գավառազետ	Նորայրուս	44.0	6.00	25.0	41.8	73.0

Առավելագույն ելքերի մեծությունները. մ ³ /վրկ							
1	Փամբակ	Շիրակամուտ	20.0	5.90	5.50	19.5	45.6
2	Փամբակ	Վանածոր	35.0	10.2	13.2	33.8	83.5
3	Փամբակ	Մեղրուտ	55.0	14.0	16.2	52.9	109
4	Փամբակ	Թումանյան	80.0	21.6	25.6	79.1	171
5	Դերբեղ	Թումանյան	210	51.3	66.0	203	477
6	Դերբեղ	Ախթալա	260	55.2	71.5	257	760
7	Դերբեղ	Այրում	270	80.0	50.6	245	884
8	Լեռնաջուր	Լեռնապար	10.0	2.52	3.90	9.90	24.3
9	Տանձուտ	Վանածոր	20.0	5.02	3.20	19.3	65.6
10	Ալարեքս	Դերբեղ	23.0	11.5	2.30	21.1	80.9
11	Ձորազետ	Կաթնառատ	25.0	6.63	9.60	22.3	52.4
12	Ձորազետ	Սրեփանավան	95.0	31.0	32.7	92.9	249
13	Ձորազետ	Գարգառ	145	43.7	23.1	125	417
14	Տաշիր	Սարապովկա	41.0	18.0	4.70	33.0	125
15	Գարգառ	Կուրթան	15.0	7.77	3.90	13.9	76.0
16	Մարցիզետ	Թումանյան	32.0	10.4	4.30	30.3	93.0
17	Աղստև	Ֆիդլեյովո	11.0	3.90	1.60	9.50	26.1
18	Աղստև	Դիլիջան	25.0	6.59	4.90	24.4	53.1
19	Աղստև	Իջևան	85.0	21.2	16.6	75.6	182
20	Բլլղանզետ	Դիլիջան	9.00	2.40	1.48	8.14	16.2
21	Շամլուղ	Դիլիջան	5.00	1.30	0.98	4.31	10.5
22	Գեղիկ	Գոշ	37.0	12.0	5.20	35.9	74.5
23	Գեղիկ	Ճամբարակ	11.0	4.25	2.10	10.4	32.4

1	2	3	4	5	6	7	8
24	Պաղջուր	Գեյրահովիտ	33.0	11.1	1.50	29.9	83.8
25	Ոսկեպար	Ոսկեպար	21.0	7.30	1.80	19.7	45.8
26	Կիրանց	Աճարկուտ	13.0	3.85	1.50	10.9	29.1
27	Հախում	Ծաղկավան	17.0	5.81	2.90	16.6	44.3
28	Տավուշ	Բերդ	12.0	5.56	1.60	11.2	35.4
29	Հախինջա	Այգեձոր	40.0	13.1	3.10	38.4	89.0
30	Նալտիզեպ	Գանձաքար	8.00	3.67	1.10	7.50	24.8
31	Ախուրյան	Ամասիա	31.0	7.99	11.0	30.4	58.0
32	Ախուրյան	Ախուրիկ	75.0	21.9	15.8	60.7	182
33	Քասախ	Վարդենիս	25.0	16.6	2.90	23.2	151
34	Քասախ	Աշտարակ	63.0	19.0	7.20	50.6	130
35	Հրազդան	Հրազդան	63.0	20.6	16.5	62.8	144
36	Հրազդան	Արգել	35.0	11.0	5.60	27.7	82.1
37	Հրազդան	Երևան	60.0	30.4	22.0	59.0	174
38	Մարմարիկ	Հանքավան	20.0	3.88	3.40	16.5	33.4
39	Մարմարիկ	Աղավնաձոր	45.0	12.4	10.0	40.0	86.7
40	Գոմուր	Մեղրաձոր	17.0	5.40	2.40	15.4	50.6
41	Ազար	Գառնի	43.0	11.2	11.8	32.5	83.9
42	Վեդի	Ուրցաձոր	20.0	5.91	5.50	17.0	45.9
43	Արփա	Ջերմուկ	50.0	11.2	18.4	49.4	91.0
44	Արփա	Եղեգնաձոր	85.0	21.0	26.5	65.6	119
45	Արփա	Արենի	120	37.0	31.6	111	199
46	Եղեգիս	Հերմոն	35.0	7.40	10.1	27.5	48.6
47	Եղեգիս	Շապին	50.0	14.7	17.8	47.6	207
48	Արտաբուն	Արտաբունյք	6.30	2.00	1.28	6.14	16.9
49	Սելիմագեպ	Շապին	19.0	7.58	1.60	15.9	72.4
50	Մեղրիզեպ	Լիճք	5.00	0.81	1.61	4.14	7.35
51	Մեղրիզեպ	Մեղրի	22.0	8.33	5.40	17.5	87.5
52	Ողջի	Քաջարան	25.0	4.22	8.70	18.3	43.9
53	Ողջի	Կապան	63.0	15.4	11.4	55.9	133
54	Ծղուկ	Ծղուկ	17.0	6.12	5.50	15.0	39.0
55	Գեղի	Գեղի	27.0	5.47	9.00	24.0	44.0

Սևանա լիճ թափվող գետեր							
56	Ձկնագեպ	Ծովագյուղ	15.0	4.27	3.38	14.0	46.4
57	Դրախարիկ	Դրախարիկ	4.90	1.00	0.32	4.05	6.11
58	Փամբակ	Փամբակ	1.70	0.70	0.40	1.53	6.53
59	Մասրիկ	Ծովակ	11.0	2.80	2.91	9.73	21.5
60	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	3.00	0.90	0.55	2.80	15.4
61	Արծվանիստ	Արծվանիստ	3.50	1.00	0.86	3.12	15.3
62	Վարդենիս	Վարդենիկ	15.0	3.64	2.42	13.2	30.6
63	Մարտունի	Գեղհովիտ	14.0	3.43	5.80	13.6	26.7
64	Արգիճի	Վերին Գեյրաշեն	57.0	25.3	16.3	50.7	265
65	Ծաղկաշեն	Վաղաշեն	10.0	2.16	4.70	9.98	17.9
66	Բախտակ	Ծակքար	15.0	3.91	0.26	12.1	31.5
67	Շողվակ	Ձորագյուղ	5.00	1.50	1.22	4.86	18.2
68	Գավառագեպ	Նորապրուս	18.0	6.52	5.64	16.6	72.5

Վեգետացիոն ժամանակաշրջանի (01.04-30.09) հոսքի ծավալները. մլն խոր.մ


1	2	3	4	5	6	7	8
1	Փամբակ	Շիրակամուր	62.0	13.9	24.3	54.1	108.5
2	Փամբակ	Վանաձոր	130	28.1	69.3	129.5	253.0
3	Փամբակ	Մեղրուր	185	34.6	70.0	185.0	328.9
4	Փամբակ	Թումանյան	285	30.4	91.7	254.6	426.9
5	Դեբեդ	Ախթալա	727	147.0	327.3	721.0	1271.2
6	Դեբեդ	Այրում	760	164.4	279.9	757.3	1457.8
7	Լեռնաջուր	Լեռնապար	35.0	6.32	15.5	34.3	83.3
8	Այրերք	Դեբեդ	43.0	9.49	18.3	41.1	86.5
9	Ձորագետ	Կաթնառար	67.0	11.1	39.7	66.4	111.0
10	Ձորագետ	Սյրեփանավան	270	47.4	112.3	268.8	479.1
11	Ձորագետ	Գարգառ	345	68.9	140.7	344.7	607.1
12	Տաշիր	Սարապովկա	70.0	17.4	24.8	64.7	143.9
13	Գարգառ	Կուրթան	33.0	6.8	11.1	30.2	58.3
14	Մարցիգետ	Թումանյան	63.0	15.3	16.3	62.5	114.6
15	Աղսյուն	Ֆիոլեյուովո	29.0	6.0	11.4	28.6	58.2
16	Աղսյուն	Դիլիջան	75.0	17.2	22.3	73.8	172.3
17	Աղսյուն	Իջևան	290	53.8	58.5	232.4	537.6
18	Գեյրիկ	Գոշ	95.0	21.8	19.0	87.4	208.7
19	Պաղջուր	Գեյրահովիտ	55.0	13.6	6.32	46.8	96.8
20	Ոսկեպար	Ոսկեպար	29.0	9.64	4.90	28.6	76.8
21	Կիրանց	Աճարկուր	27.0	7.27	2.21	24.7	47.3
22	Հախում	Ծաղկավան	39.0	9.01	7.75	34.8	74.5
23	Տավուշ	Բերդ	20.0	7.59	2.53	17.1	61.3
24	Հախինջա	Այգեձոր	79.0	20.2	13.3	71.6	161.3
25	Ախուրյան	Ախուրիկ	137	31.9	71.1	134.4	260.9
26	Քասախ	Վարդենիս	35.0	13.0	6.48	29.9	76.8
27	Քասախ	Աշտարակ	97.0	20.1	22.1	63.2	175.5
28	Հրազդան	Հրազդան	193	41.9	84.0	191.3	366.8
29	Հրազդան	Արգել	85.0	16.1	48.7	80.5	139.3
30	Մարմարիկ	Հանքավան	49.0	8.85	14.7	45.9	84.6
31	Մարմարիկ	Աղավնաձոր	132	35.9	66.4	129.5	308.3
32	Դալար	Արգաքան	24.0	6.80	6.01	22.0	56.1
33	Ագապ	Գառնի	105	20.6	47.3	101.7	170.8
34	Վեդի	Ուրցաձոր	50.0	11.9	6.48	40.6	85.9
35	Արփա	Ջերմուկ	160	19.8	61.7	127.0	213.4
36	Արփա	Եղեգնաձոր	370	57.7	42.5	232.4	569.2
37	Արփա	Արենի	510	90.3	64.4	321.0	678.3
38	Վայք	Ջառիթափ	15.0	3.00	2.37	10.8	23.1
39	Գլաձոր	Վերնաշեն	5.00	1.39	0.52	3.48	10.0
40	Եղեգիս	Հերմոն	151	23.9	33.2	101.7	205.5
41	Եղեգիս	Շարին	247	41.6	45.9	169.2	309.9
42	Արտաբուն	Արտաբույնք	26.0	5.06	5.06	18.8	39.1
43	Սելիմագետ	Շարին	57.0	11.1	7.43	38.1	91.5
44	Մեղրիգետ	Լիճք	26.0	3.0	8.38	17.6	27.8
45	Մեղրիգետ	Մեղրի	97.0	19.1	22.0	73.4	151.5
46	Ողջի	Քաջարան	103	18.3	34.8	93.3	143.6
47	Ողջի	Կապան	310	60.7	50.1	291	507.5
48	Գեղի	Գեղի	126	25.1	50.0	114	170.8
49	Որոտան	Գորայք	115	15.7	46.3	88.5	143.2
50	Ծղուկ	Ծղուկ	51.0	12.5	8.89	33.9	96.2
<i>Սևանա լիճ թափվող գետեր</i>							
51	Ձկնագետ	Ծովագյուղ	34.0	9.49	9.49	28.9	58.5
52	Դրախսիկ	Դրախսիկ	5.50	1.58	0.47	4.59	9.64
53	Փամբակ	Փամբակ	5.90	2.21	1.90	5.22	11.5
54	Մասրիկ	Ծովակ	63.0	7.59	33.5	59.1	94.7


1	2	3	4	5	6	7	8
55	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	17.0	3.48	6.48	16.9	31.5
56	Արձվանիսպ	Արձվանիսպ	7.00	2.69	1.58	6.48	19.6
57	Վարդենիս	Վարդենիկ	40.0	9.49	9.64	39.1	82.2
58	Մարտունի	Գեղիովիպ	43.0	10.3	20.4	42.2	88.2
59	Արգիճի	Վերին Գեղաշեն	170	29.9	64.8	135.3	315
60	Ծաղկաշեն	Վաղաշեն	38.0	6.96	17.4	36.7	56.0
61	Բախարակ	Ծակքար	20.0	5.22	1.90	17.2	35.4
62	Շողվակ	Ձորագյուղ	12.0	2.85	3.95	10.4	20.9
63	Գավառագետ	Նորայրուս	62.0	7.59	46.6	62.3	105


ՋՐԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՋՐԱՄԲԱՐՆԵՐ ԵՎ ԼՃԵՐ՝ ԳԵՏԵՐՈՎ

1	2	3	4	5	6	7	8
(01.04-30.06) մլն. խոր.մ							
1	Սևանա լիճ		510	68.2	209	410	676
2	Արփի լճի ջրմբ.		80.0	9.57	32.6	63.0	109
3	Ախուրյանի ջրմբ.		542	118	191	492	971
4	Ապարանի ջրմբ.		65.0	16.0	25.0	57.0	133
5	Ազարի ջրմբ.		87.0	18.4	36.9	87.0	161
6	Կեչուրի ջրմբ		190	25.2	73.5	149	258
7	Սպանդարյանի ջրմբ.		135	25.0	60.0	130	210
8	Ջողազի ջրմբ.		87.0	24.7	7.70	77.8	157
9	Գեղիի ջրմբ.		130	23.9	51.7	119	227
10	Հախումի ջրմբ		35.0	7.85	6.12	32.6	56.5
11	Տավուշի ջրմբ		16.0	5.46	1.71	13.7	37.5

(01.04-30.09) մլն. խոր.մ							
1	Սևանա լիճ		620	80.6	289	538	857
2	Ախուրյանի ջրմբ.		680	135	275	629	1233
3	Ապարանի ջրմբ.		80.0	18.7	21.3	70.2	129.3

Տնօրենի տեղակալ՝  Էդգար Միսակյան

Հիդրոլոգիայի ծառայության պետ՝  Անայա Միսակյան

Հիդրոլոգիական կանխատեսումների բաժնի պետ՝  Լուսինե Շաքարյան

Թողարկվել է 30.03.2026թ.